



# Սյունյաց Երկիր

ՆԱԲԱԹ, 28 ՀՈՒՆՎԱՐԻ 2017Թ.  
№ 3 (421)  
www.syuniacyerkir.am

**Չունվարի 28-ը՝  
բանակի օր:  
Շնորհավորում  
ենք:**



## ՍԵՐԳԵՅ ԼԱՎՐՈՎ. «Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորումը բացա- ռապես Ադրբեջանի ներքին գործը չէ»

Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորումը չի կարող տեղի ունենալ բռնի ուժի միջոցով: Ինչպես հաղորդում է «Արմենպրես»-ը, այս մասին հունվարի 17-ին հայտարարեց ՌԴ արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովը 2016թ. ամփոփիչ մամուլի ասուլիսի ժամանակ:

ՌԴ արտգործնախարարն ուշադրություն հրավիրեց հակամարտության հարցով ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի ընդունած որոշումների վրա՝ նշելով, որ հիմնախնդրի կարգավորումը պետք է լինի առանց ուժի կիրառման եւ Լեռնային Ղարաբաղի վերջնական կարգավիճակի հստակեցմամբ:

«Սա ամրագրված է այն փաստաթղթերում, որոնք նշակվել են ԵԱՀԿ Մինսկի խմբի կողմից՝ համաձայնագրի միջոցով, ամրագրված է բազմաթիվ հայտարարություններում, որոնք ընդունել են համաձայնագրի երկրները՝ ՌԴ, Ֆրանսիայի եւ ԱՄՆ նախագահները, ինչպես նաեւ այն հայտարարություններում ու փաստաթղթերում, որոնք ընդունվել են Հայաստանի ու Ադրբեջանի նախագահների կողմից: Վեժների խաղաղ կարգավորումն արձանագրված է այնտեղ ոչ երկխոսությամբ», – նշել է Լավրովը:



Նա խիստ ահազանգող է համարել 2016 թվականի ապրիլին տեղի ունեցած արյունալի իրադարձությունները: «Ռուսաստանը որոշիչ դեր ունեցավ արյունահեղության դադարեցման հարցում: Սենք պայմանավորվել ենք Վիեննայում նախագահներ Սարգսյանի եւ Ալիևի հետ հանդիպման ժամանակ, այնուհետեւ ՌԴ նախագահ Պուտինը 2016 թվականի հունիսին նրանց հետ համաձայնության է եկել Պետերբուրգում այն մասին, որ հաշվի առնելով փոխադարձ մեղադրանքները, անհրաժեշտ է ստեղծել դեպքերի հետաքննման մեխանիզմ, ավելացնել ԵԱՀԿ դիտորդների թիվը շփման գծում: Դեպքերի հետաքննության անհրաժեշտության մասին խոսվել է նաեւ 2011 թվականին, երբ Ռուսաստանի, Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների հանդիպումը տեղի էր ունենում Աստրախանում: Ցավոք, նման տարրական բանը՝ դեպքերի հետաքննումը եւ դիտորդների թվի ավելացումը, չի կարող կյանքի կոչվել, քանի որ դեռեւս չկա կոնսենսուս», – ասել է ՌԴ արտգործնախարարը:

Լավրովը նաեւ շեշտել է, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորումը արստրակտ չէ եւ «բացառապես Ադրբեջանի ներքին գործ չէ»:

## Մեղրեցի երիտասարդները զորակոչվում են հայոց բանակ

Հունվարի 19-ին Մեղրու փարածաշրջանում մեկնարկեց 2017թ. ձմեռային զորակոչը: Մեղրեցի զինակոչիկների առաջին խումբը՝ 17 երիտասարդ, մեկնեց հանրապետական կենտրոնական հավաքակայան՝ փոխարինելու սահմանադրական պարտքը կատարած իրենց

ավագ ընկերներին: Այդ առթիվ Մեղրու զինկոմիսարիատի մերձակա պուրակում փեղի ունեցավ հանրահավաք:

Նորակոչիկներին բանակ մեկնելու առթիվ ողջերթի խոսք ասացին Մեղրու համայնքապետ Մխիթար Ջաբարյանը, Մեղրու զինկոմ,

մայրը Դավիթ Անանյանը: Ապագա զինվորներին Տերունական աղոթքը հղեց Մեղրու տարածաշրջանի հոգևոր հովիվ տեր Ռաֆայել քահանա Խաչիկյանը: Ավանդական երգերով արժատոյանք համայնքն իր զինվորացու տղաներին բանակ ճանապարհեց:

**Սեփ. Լրագրություն**

## Ասա՛ ով է պարզամավորի թեկնածուդ, ասեմ՝ ինչ նկարագիր ու բարոյականությունն ունես, կուսակցություն՝ և

Ովքե՛ր Սյունիքից կընդգրկվեն կուսակցությունների (նրանց դաշինքների) տարածքային ընտրական ցուցակներում

հետաքրքրվում ընտրական նոր օրենսգրքով, փորձում գտնել իրեն մտահոգող հարցերի պատասխանը, չնայած հատուկներ են մարդիկ, ովքեր ի վիճակի են հիմնավոր ու հասկանալի պարզաբանումներ տալ արդեն գործող ընտրական օրենսգրքի նորացված, փոփոխված դրույթների, նորամուծությունների շուրջ:

Նախընտրական այս փուլում հետաքրքրություն ներկայացնող հարցերից առաջինը, բնականաբար, կուսակցությունների դաշինքների ձևավորումն է:

Ոչ պակաս հետաքրքիր են կուսակցությունների (նրանց դաշինքների) կողմից ձևա-

վորվող համապետական եւ հատկապես տարածքային ընտրական ցուցակները: Հարցն առավել քան կոնկրետ է մեզանում՝ այս կամ այն կուսակցությունից (կուսակցությունների դաշինքից) ովքե՛ր են Սյունիքից ընդգրկվելու տարածքային ընտրական ցուցակում. խոստովանենք, դա հարց է, որ վճռորոշ նշանակություն է ունենալու ապրիլի 2-ին:

Հիշեցնենք՝ կուսակցությունները (կուսակցությունների դաշինքները) պատգամավորների թեկնածուների գրանցման համար փաստաթղթերը Կենտրոնական ընտրական հանձնաժողով կներկայացնեն փետրվարի 6-16-ը:

Հիշեցնենք նաեւ՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը սահմանել է (30 դեկտեմբերի 2016թ.) յուրաքանչյուր ընտրական տարածքում կուսակցության (կուսակցությունների դաշինքի) տարածքային ընտրական ցուցակում ընդգրկվող թեկնածուների առավելագույն թիվը (մոտ 153 հազար ընտրող ունեցող Սյունիքի եւ Վայոց ձորի մարզերն ընդգրկող թիվ 12 ընտրատարածքում թեկնածուների առավելագույն թիվ է սահմանվել 10-ը):

Ապրիլի 2-ին կայանալիք ԱԺ ընտրությունների նախապատրաստությունն օրեցօր ակտիվանում է:

Հանրությունը, որ մեծ մասամբ հայտնված է անտարբերության եւ պասիվության մառախուղի մեջ, աստիճանաբար արթնանում է,

# ԱՐԹՈՒՐ ԱՂԱԲԵԿՅԱՆ. «Մեր բանակն ամեն վայրկյան պետք է պատրաստ լինի ամուր պաշտպանության, ինչու չէ՝ Նաեւ հակահարձակման»



Հարցազրույց հայոց բանակի 25-րդ տարեդարձի առիթով

**Արցախի սահմանին փրոդ իրավիճակի, դրանով պայմանավորված ընդհանուր մթնոլորտի, ինչպես նաև հայոց բանակի կազմավորման 25-ամյակի կապակցությամբ գրուցեցինք ԼՂՀ փոխվարչապետ, գեներալ-լեյտենանտ Արթուր Աղաբեկյանի հետ:**

– Պարոն գեներալ, վերջին շրջանում սահմանամերձում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ Ձեր գնահատականը:

– Դեկլարներս, հրամանատարներս, գեներալներս, եւ առհասարակ ռազմավարական որոշում կայացնողները պետք է ուժ գտնեն եւ միշտ անկեղծ լինեն ժողովրդի հետ: Այսօր սահմանին տիրող իրավիճակը սկիզբ է առել 1994թ. զինադադարի հաջորդ օրվանից. սա պետք է ընդունենք որպես ճշմարտություն: Պետք է ընդունենք նաև, որ ապրիլյան իրադարձությունները հակառակորդի երկար տարիների գործողությունների, հրադադարի ռեժիմի պարբերաբար խախտման շարունակությունն էին: Այսօր էլ հակառակորդը շարունակում է դիպուկահար իրացանքներ, ակամաններ կիրառել եւ դեռ կշարունակի... Բարձրաձայնեմ հետևյալը. մեր ժողովուրդը պետք է գիտակցի, որ սա իր խաչն է, որ արժանապատվորեն պետք է կրի մինչև վերջ. յուրաքանչյուրս մեր հնարավորությունների եւ կարողությունների չափով մեր ուսը ծառայեցնենք այդ խաչին: Առաջնագծի լարվածությունը դեռևս կշարունակվի եւ ժամանակ առ ժամանակ ավելի կսրվի: Իմ համոզմամբ՝ գոնե առաջիկա տարիներին հնարավորություն չենք ու-

նենա պաշտպանությունից անցնել սահմանապահության: Մեր բանակն ամեն վայրկյան պետք է պատրաստ լինի ամուր պաշտպանության, ինչու չէ՝ նաև հակահարձակման:

– Բաբվից ամեն օր լսվող պատերազմի հռետորաբանությանը, որ մեզ համար արդեն սովորական է դարձել, հարմարվել ենք, բայց այդ ամենը՝ մի կողմ: Վերջերս Ադրբեյջանի նախագահ Իլհամ Ալիևը խոսեց Ռուսաստանի հետ ժամանակակից զենքի առավելագույնը մեր համաձայնագրի մասին՝ մոտ 5 մլրդ դոլարի հասնող, ինչը լուրջ բնարկման առարկա դարձավ մեզանում եւ մտահոգության տեղիք տվեց: Ինչպե՞ս է ընկալվում Ադրբեյջանի դեկլարի այդ հայտարարությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում:

– Հաշվի առնելով, որ ուժերի հարաբերակցություն հասկացություն գոյություն ունի, առնականադարձորը միշտ կատարում են հնարավորությունների համեմատում. վստահաբար կարող են ասել, որ Ադրբեյջանը դեռ մի քանի տարի պետք է այդ տեմպերով շարունակի զինվել, որ ուժերի հարաբերակցության առումով հասնի այն աստիճանի, որ ունեցել է Հայաստանը դեռևս 1994 թվականին: Նկատի ունեն, որ նրանց ունեցած զենք-զինամթերքը, հեռահար իրետանցի են մյուս զինատեսակները դեռ չեն նշանակում առավելություն, մարտական խնդրի կատարման կարողություն կամ հնարավորություն:

Ինչ վերաբերում է Ռուսաստանից զենքի առավելագույնը վերաբերյալ համաձայնագրերին, ապա պետք է ուղղակի հետեւենք այդ գործընթացին, համապատասխան հետևություններ անենք, ցավ ապրենք, որ մեր ռազմավարական դաշնակիցը, շատ լավ գիտակցելով, թե ում հետ գործ ունի, ժամանակ առ ժամանակ շարունակում է զենք վաճառել նրան. միգուցե դա համարենք

դավաճանություն կամ միգուցե չհամարենք, դա թողնենք մի կողմ: Բայց ընդունենք՝ սա մի իրողություն է, որի հետ պետք է հաշտվենք, որից մեր քաղաքական, ռազմական գործիչները, դիվանագետները համապատասխան հետևություններ պետք է անեն, իսկ բանակը պատրաստ լինի կատարելու իր առաքելությունը:

– Տեղյակ ենք թալիշում կատարվող վերականգնողական, շինարարական աշխատանքներին, գյուղի վերաբնակեցմանը միտված քայլերին, որ մեզ հուսադրում է: Արդյո՞ք Արցախի սահմանային այլ բնակավայրերում նույնպես կատարվում են նմանատիպ աշխատանքներ:

– Թալիշում իրականացվող աշխատանքները հատկապես ներդրումների առումով պետք է օրինակ ծառայեն: Ցավոք, նյութական սահմանափակ ռեսուրսները թույլ չեն տալիս ողջ սահմանի երկայնքով նմանատիպ աշխատանքներ ծավալել, բայց, կարծում են, Թալիշը հետագայում կլինի ԼՂՀ լավագույն գյուղերից մեկի օրինակը: Միայն հայրենի երկրի շենացմամբ կարող ենք մեր ժողովրդին, ողջ աշխարհին ցույց տալ, որ արցախցին, հայն իրավունք ունեն իրենց երկրում ազատ ապրել՝ վերածելով իրենց տունն ամրոցի կամ կրակակետի:

– Ձեր շնորհավորանքի խոսքը հայոց բանակի կազմավորման 25-ամյակի կապակցությամբ:

– Օգտվելով առիթից՝ շնորհավորում են բոլորիս՝ հայ ժողովրդի համար նվիրական տոնի առթիվ: Նշանակալից տարեդարձի կապակցությամբ հայոց բանակին մաղթում են հարատևություն, տոկունություն, ուժ, հայ զինվորին եւ զինվորականին՝ զգոնություն, համարձակություն եւ քաջություն, իսկ մեր սահմաններին՝ խաղաղություն: Տա Աստված, որ մեր բանակը մի օր պաշտպանությունից անցնի սովորական սահմանապահության սուրբ գործին:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

## Ազատ փնտեսական գոտի՝ Սյունիքում

Հայաստանի կառավարությունը ծրագրել է Իրանի հետ սահմանակից տարածքում՝ Սյունիքի մարզում, ստեղծել ազատ փնտեսական գոտի (ԱՏԳ): Այն սկզբնական շրջանում կունենա 10-15 հեկտար տարածք՝ հետագայում եւս տարածելու հնարավորությամբ:

Ծրագիրը, որն առավելագույն կբավարարի Հայաստանի զարգացման նպատակները:

« Ինչ վերաբերում է ազատ փնտեսական գոտու գործունեության մեկնարկին, ապա նախաձեռնողները հույս ունեն, որ այն կսկսի գործել մինչև այս տարվա վերջ:»

Ազատ փնտեսական գոտու հիմնման համար կծախսվի մոտ 32 միլիոն դոլար, որում ներառված են եւ կապիտալ ներդրումները, եւ ընթացիկ ծախսերը: Ազատ փնտեսական գոտու տեղակայումը որոշվել է իրականացնել Սյունիքի մարզում՝ հաշվի առնելով նաև հայ-իրանական առևտրատնտեսական հարաբերությունները: Իրանի Իսլամական Հանրապետության հետ սահմանագծին հարող տարածքում նախանշվել է հողակտոր, որտեղ նպատակահարմար է իրականացնել նախագիծը: Լրագրողների հետ կայացած հանդիպման ժամանակ այդ մասին տեղեկացրել է ՀՀ տնտեսական զարգացման եւ ներդրումներ

Ներկա պահին որպես կազմակերպիչ կողմեր հետաքրքրված են ռուսական, իրանական եւ չինական մի շարք կազմակերպություններ:

ՀՀ տնտեսական զարգացման եւ ներդրումների նախարարի տեղակալ Հովհաննես Այվազյանի փոխանցմամբ՝ ծրագրի շրջանակներում Հայաստանն իր գործընկերներին կառաջարկի միս, շոկոլադ, հրուշակեղեն, ինչպես նաև շալցված հանքային ջուր, ծխախոտ, դեղորայք: Նաև համոզմունք հայտնեց, որ իրանական 80 միլիոնամոց բնակչության շուկայում հայկական արտադրության յուրաքանչյուր



րի նախարարության ներդրումային ծրագրերի բաժնի պետ Արամ Վարդանյանը:

« Ինչ վերաբերում է աշխատատեղերին, ապա առաջիկա տասը տարվա ընթացքում կստեղծվի մոտ 2500 աշխատատեղ:»

Բանն այն է, որ հայ-իրանական սահմանից երկու կիլոմետր հեռու՝ Իրանի տարածքում գործում է Արաս տնտեսական գոտին, ինչը համագործակցության լավ հնարավորություններ է ստեղծում, համոզմունք է հայտնել նախարարության ներդրումային ծրագրերի բաժնի պետը՝ վկայակոչելով փաստը, որ Սյունիքի մարզում ստեղծվելիք տնտեսական ազատ գոտին թվով երրորդն է Հայաստանում՝ Երեւանում գործող երկու այդպիսի գոտուց հետո:

ՀՀ տնտեսական զարգացման եւ ներդրումների նախարարությունում համոզված են, որ ծրագիրը հանրապետության տնտեսության զարգացման համար լայն հնարավորություններ կստեղծի: Ազատ փնտեսական գոտու տարածքում «ոլոփի ֆրի» համակարգով այցելողներին հնարավորություն կընձեռվի ապրանքներ գնել առանց մաքսատուրքերի: Մինչև փետրվարի 10-ը կընդունվեն ներդրողների կողմից հայտեր, որոնցից վերջնականապես կընտրվի այն

ապրանք անկասկած լավ կվաճառվի: Փոխնախարարը տեղեկացրել է նաև, որ ՀՀ կառավարությունը համագործակցության է իրավիճակում Սյունիքի մարզում ստեղծվող ազատ փնտեսական գոտու պոտենցիալ կազմակերպիչներին, ինչպես նաև ընդունում է ազատ փնտեսական գոտում շահագործողի կարգավիճակով գործունեություն ծավալելու համար նախնական դիմումներ, ինչի մասին հայտարարությունը տեղադրված է նախարարության կայքում: Այս ամենին նախարարը հավելել է, որ հույս ունեն ներգրավել տարբեր երկրներից բավական լավ փորձ եւ կապեր ունեցող, ներդրումներ անելու մտադրությամբ ձեռնարկություններ:

« Նախարարի տեղակալը նաև հավաստիացրեց, որ ծրագիրը թղթի վրա չի մնալու:»

Շատ ենք ուզում հավատալ նրա հավաստիացմանը: Տարիներ առաջ նույն նպատակով իրանցի եւ հայ ձեռներեցների միջև առևտրատնտեսական հարաբերություններ զարգացնելու համար հիմնվեց Մեղրու սահմանային շուկան: Նույնիսկ դրա հանդիսավոր բացումը եղավ, բայց այդ շուկայից միայն հեռավոր հուշեր են մնացել...  
ՎԱՐՄԱՍ ՕՐԲԵՆՅԱՆ



2012թ. նոյեմբերի 7, հեկի շինարարության մեկնարկը

# Մեղրու հեկի շինարարությունը դարձյալ օրակարգում չէ

**ՀՀ կառավարությունը վերջերս հաստատել է 2017թ. գործունեության ծրագիրը, որում խոսք չկա Մեղրու հեկի կառուցման մասին:**

Հեկի շինարարության մեկնարկը, ինչպես հիշում եք, տրվել է 2012թ. նոյեմբերի 7-ին: Հեկի շինարարությունը պետք է տեսեր հինգ տարի եւ ավարտվեր

2017-ին: Շինարարության համար անհրաժեշտ 329 մլն դոլար ներդրումը պետք է կատարեր Իրանի Իսլամական Հանրապետությունը: Ենթադրվող հեկը տարեկան պետք է արտադրեր 800 մլն կվտ/ժամ էլեկտրոգիս: Շահագործման հանձնվելուց հետո հեկը 15 տարի պետք է էլեկտրոգիս արտահաներ Իրան,

որից հետո անհատույց կփոխանցվեր Հայաստանի Հանրապետությանը: Ուշագրավ է, որ Իրանի Իսլամական Հանրապետության նախագահ Հասան Ռոհանիի՝ 2016թ. դեկտեմբերին Հայաստան կատարած այցի ժամանակ Մեղրու հեկի շինարարության հարցը ներառված չի եղել այցի օրակարգում:

**Սեփ. լրագրություն**

# Որպեսզի երեխան վայելի ընտանեկան ջերմություն



Որպեսզի առանց ծնողների երեխան ընտանեկան ջերմության մթնոլորտում մեծանա, խնամքի հաստատություններն էլ հնարավորինս բեռնաթափվեն, միջազգային ու տեղական կազմակերպությունների նախաձեռնությամբ 2005-2006թթ. Հայաստանում ներդրվեց զարգացած երկրներում լայն կիրառում ունեցող խնամատար ընտանիքի մոդելը: Ակզբունքն այսպիսին է՝ հատուկ վերապատրաստում անցած, համապատասխան պայմաններ ունեցող ընտանիքը ստանձնում է առանց ծնողների մնացած երեխայի խնամատարությունը՝ ստանալով x գումար երեխային պահելու եւ նրա ծախսերը հոգալու համար: Ծրագրի պիլոտային փուլը ֆինանսավորեց ՅՈՒՆԻՍԵՖ-ը: Մոտ տասը տարի

առաջ մեկնարկած ծրագրի շրջանակում Գավառի եւ Վանաձորի խնամքի հաստատություններից խնամատար ընտանիքներ տեղափոխվեց մոտ 30 երեխա: Պիլոտային փուլն ավարտվեց, երկու տարի անց՝ 2008թ. խնամատարության ինստիտուտի ֆինանսավորման եւ հետագա զարգացման պարտավորությունը ստանձնեց պետությունը:

ԱՄՆ միջազգային զարգացման գործակալությունը եւ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամը համաֆինանսավորում են 2014 թվականից մեկնարկած «Խոցելի երեխաների սոցիալական ներառում» ծրագիրը, որի իրագրված շրջանակում հունվարի 18-ին Սյունիք համայնքի միջնակարգ դպրոցում տեղի ունեցավ հանդիպում, որին մասնակցում

էին համայնքի ղեկավար Սամվել Սարգսյանը, դպրոցի տնօրեն Լիլիթ Առաքելյանը, համայնքի բնակիչներ, մանկավարժներ: Հայ օգնության ֆոնդի երեխաների աջակցության կենտրոնի ներկայացուցիչները Սյունիք համայնքի բնակիչներին, որպես պոտենցիալ ծնող, տեղեկացրին խնամատարության կարգին, եւթյանը, տեսակներին, դիմումների կարգին: Ցուցադրվեց տեսաֆիլմ, որի առանցքում երեք խնամատար ընտանիք էին եւ դրանցում տեղավորված երեխաների պատմությունները: Ծրագրին աջակցում են «Հույսի կամուրջ», «World Vision» «Save the children» կազմակերպությունները:

Խնդրո առարկայի շուրջ տեղի ունեցավ ակտիվ քննարկում: Հանդիպման մասնակիցները հարցեր ուղղեցին ծրագրի մասնագետներին, ովքեր հանդես եկան պարզաբանումներով, ներկայացրին խնամատարության գործընթացի փուլերը, դիմումների կարգը եւ այլն:

Ինչպես «Սյունյաց երկրին» հայտնեց Հայ օգնության ֆոնդի խնամատարության ծրագրի պատասխանատու Ելենա Հարությունյանը, իրագրվումները մարզում սկսել են ամառվանից: Դրանք եղել են Գորիս, Կապան, Մեղրի համայնքներում եւ դրանց հարակից գյուղական բնակավայրերում: Այս անգամ ծրագրի պատասխանատուները Սյունիք են ժամանել քիմով, բացի իրագրվումներից՝ իրականացնում են արդեն գրանցված խնամատար ընտանիքների գնահատումներ, թե որքանով վերջիններս կարող են լինել խնամատար ընտանիք երեխաների համար, փորձում են հասկանալ այդ ընտանիքների շարժառիթները, նրանց ակնկալիքը խնամատարության գործընթացից:

**ՎԱՅՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ**

# Ասա՛ ով է պարզամտների թեկնածու, ասեմ՛ ինչ նկարագիր ու բարոյականություն ունես, կուսակցությո՛ւն

Տարածքային ընտրական ցուցակում ընդգրկվողների նվազագույն թիվը չի կարող հինգ թեկնածուից պակաս լինել: Ընդ որում՝ տարածքային ընտրական ցուցակում յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների թիվը չպետք է գերազանցի 70 տոկոսը:

Այս օրերին Սյունիքի մարզում նույնպես տարաբնույթ քննարկումներ, հանդիպումներ են կազմակերպում կուսակցությունները (նրանց ներկայացուցիչները)՝ տարածքային ընտրական ցուցակները ձևավորելու միտված, բայց պարզ չէ վերջնականապես, թե ովքեր կընդգրկվեն այս կամ այն կուսակցության տարածքային ընտրական ցուցակում:

Մի բան է հստակ եւ անքննելի՝ այդ ցուցակներում ընդգրկված մարդկանց պրիզմայով է ընտրողը նայելու, գնահատելու տվյալ կուսակցությանը, այդ կուսակցության նախընտրական պատճիռները, բարոյական նկարագիրը, իրական ու անպաճույճ դեմքը:

Հարցի պատասխանը, ինչպես նշեցինք, պաշտոնապես կիմանանք փետրվարի 6-ից 16-ն ընկած ժամանակաընթացքում, թեև առանձին կուսակցություններ (կուսակցությունների դաշինքներ) մոտ օրերս արդեն իսկ կուսակցական ցուցակների վերջնական տարբերակը: Տեսներք...

**ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

# Պաշտոնաթողություն եւ պաշտոնակալություն Կապանի հիվանդանոցում

Հունվարի 18-ին Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանը Կապանի բժշկական կենտրոնի կոլեկտիվին ներկայացրեց բժշկական կենտրոնի տնօրենի պաշտոնակատար Ռոմիկ Սարգսյանին (Կապանի բժշկական քոլեջի տնօրեն): Մինչ այդ բժշկական կենտրոնի եւ պոլիկլինիկայի բուժանձնակազմերը հավաքվել էին մարզպետարանի առջև: Մարզպետարանի դահլիճում հանդիպում է կայացել Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանի հետ: Ներկայումս փորձել են մարզպետից պարզաբանում ստանալ, թե ինչու է աշխատանքից ազատվել բժշկական կենտրոնի տնօրեն Սմբատ Օրբելյանը: Մարզպետը վկայակոչել է վերջին շրջանում արձանագրված մահացության դեպքերը: Հանդիպումը տեղ-տեղ անցել է լարված մթնոլորտում:

Իրենց նկատառումներն են հայտնել բժշկական կենտրոնի վնասվածքաբան Սարիկ Աթաջանյանը, մանկաբույժ Արարատ Հարությունյանը, բժշկուհի Իրինա Նազարեթյանը՝ ներկայացնելով մահացության դեպքերի հետ կապված մանրամասներ, լույս սփռելով կատարվածի վրա:

Բժշկական կենտրոնում կայացած վերոնշյալ միջոցառման ժամանակ կենտրոնի տնօրեն Սմբատ Օրբելյանը շնորհակալություն է հայտնել կոլեկտիվին՝ համատեղ աշխատանքի համար, նշելով, որ իր աշխատանքային գործունեության 34 տարին Կապանի բժշկական կենտրոնում է անցել (նախկինում՝ Դավանի շրջանային հիվանդանոց), որից 21-ը՝ տնօրեն:

**ՎԱՅՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ**

# Շաքեի ջրվեժը զբոսաշրջիկների համար կգործի բնականոն ռեժիմով

**Հունվարի 13-ին ՀՀ բնապահպանության նախարարությունում կայացել է քննարկում Շաքեի ջրվեժի եւ «Շաքի ՓՅԷԿ»-ի խնդրի կարգավորման վերաբերյալ, որը վարել է բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանը:**

Գալստյան» ՍՊԸ-ին պատկանող ՓՅԷԿ-ի խնդրահարույց հարցը մնում էր չլուծված, եւ հերթական քննարկման նպատակն այնպիսի լուծում գտնելն էր, որը եւ բնապահպանական, եւ տնտեսական առումով կարող է համարվել հաջողված:

Քննարկմանը մասնակցել են ՀՀ բնապահպանության եւ տնտեսական զարգացման եւ ներդրումների նախարարությունների համապատասխան ստորաբաժանումների պատասխանատուներ, Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի անդամներ, Զբոսաշրջության պետական կոմիտեի նախագահի պաշտոնակատարը, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, «Շաքի ՓՅԷԿ»-ի համասեփականատեր Աղասի Հակոբջանյանը: Տարիներ շարունակ Շաքեի ջրվեժի եւ «Հակոբջանյան եւ

Ներկայացնելով ՀՀ բնապահպանության նախարարության վերահսկողական գործառնայի շրջանակներում իրականացված միջոցառումները՝ Բնապահպանական պետական տեսչության պետ Հակոբ Գալստյանը ներկայացրել է «Հակոբջանյանի եւ Գալստյանի ՅԷԿ» ՍՊԸ-ում 2016 թվականի հոկտեմբերի 31-ին կատարված ստուգումների արդյունքները, համաձայն որոնց, բացահայտվել է, որ 2015 թվականի մայիսին ընկերությանը տրվել է ՋԹ 1500 լ/վրկ. ՓՅԷԿ-ի շահագործման համար եւ այս ջրաքանակի շահագործման դեպքում արդեն չի

Շինուհայրի գերդասաններից մեկը



# Մարդն ապրում է, քանի դեռ նրան հիշում են

Բարձրահասակ ու հաղթանդամ, գլուխը քիչ առաջ հակած այդ այրն ամեն օր՝ վաղ առավոտյան, աշխատանքային օրն սկսվելուց շատ առաջ դուրս էր գալիս Գորիսի՝ այսօր Մաշտոցի անունը կրող փողոցի թիվ 1 փան իր բնակարանի շքամուտքից, թեքվում դեպի Փ.Տաթևազու հրապարակ ու կանգ առնում ծաղկի խանութի անկյունում. սպասում էր Արամ Զարությունյանին:

Նույն շենքում էին աշխատում. Արամ Զարությունյանը շրջխորհրդի գործկոմի նախագահն էր, սպասողն էլ՝ Գուրգեն Աբելի Զարությունյանը, մթերումների վարչության պետը: Իսկ մինչև իր անմիջական ղեկավարի, հարեանի, ընկերոջ գալը բարի լույս էր մաղթում անցնող-դարձողին, նաև նրանց բարեն ընդունում: Փալիս էր հարեանը, անպայման ձեռքով բարեւում, չնայած ապրում էին միեւնույն հարթակի դրկից բնակարաններում եւ միասին շարժվում դեպի աշխատատեղ՝ գործադիր կոմիտեի շենք, որ այն փարիներին փեղավորված էր երաժշտական դպրոցի նախկին շենքում:

## Թող այսուհետ Զայաստանում միայն վերադարձի կենացներ խմեն

Ինչքան մարդ, այնքան՝ մտածելակերպ: Ասել է թե՛ յուրաքանչյուր մարդ մտածելու իր կերպն ունի: Գառնիկ Զարությունյանն էլ յուրովի մտածելակերպի տեր մարդ է: Իսկ այն մի օրում չի ձեւավորվել: Այն տարիների հանրագումար է, տարիների փորձի ընդհանրացված արտահայտություն, որը նաեւ տարիների հետ մոր երանգներ է ձեռք բերել: Եվ տարիները նրան բերել են այն համոզման, որ առաջնահերթությունը պետք է տալ դաստիարակությանը եւ ոչ թե կրթությանը:

– Գիտե՞ք ինչ, – ասում է Գառնիկ Զարությունյանը, – մարդ կարող է բարձրագույն կրթություն չունենալ, սակայն ստացած դաստիարակությունը նրան հնարավորություն կտա լավ մարդ դառ-

նալ, լավ քաղաքացի դառնալ: Գեռուն չգնանք, վերջները 2016թ. քառօրյա պատերազմը. 18-20 տարեկան զինվորների մեծ մասը բարձրագույն կրթություն չունեն: Բայց նրանք իրենց ընտանիքում դաստիարակություն էին ստացել: Եվ ահա դրա արդյունքը. ամերեկ կանգնեցին թշնամուն դեմ հանդիման եւ կանխեցին նրա առաջխաղացումը:

– Ի՞նչ կարծիք ունես այսօրվա սերնդի մասին, – հարցնում են Գառնիկ Զարությունյանին:

– Սերունդը լավն է: Ավստս, որ նրա մի մասը հնարավորություն չունի որակյալ կրթություն ստանալու: Բայց զբաղվում է իրենով, զբաղվում է ինքնակրթությամբ: Եվ հետաքրքիրն այն է, որ այժմ, երբ աշխատատեղերի թիվը սահմանափակ է, երիտասարդների մի մասն իր համար ինչ-որ աշխատատեղ է ստեղծում: Նա պատասխանատվության զգացում ունի ոչ միայն իր, այլև հայոց ապագայի համար: Զրուցակիցս Գորիսի տարածաշրջանի Շինուհայր գյուղից է: 45 տարվա մանկավարժական աշխատանքի փորձ ունի: Ավարտել է Երեւանի պետսեմալսարանի



Գուրգեն Զարությունյան

Գուրգեն Զարությունյանը ծնվել է 1927թ. Շինուհայրում: Բազմանդամ, հոգաշատ նահապետական ընտանիք էր: Շատերի մեծն հացի խնդիրն այս տոհմի ավագներին եւս ստիպել էր բախտ փնտրել Բաքվի նավթահանքերում: Երբ լրացավ Գուրգենի 14-ը, հորեղբայրը, ով վաղուց ընտանիքով հիմնավոր-



Գուրգեն Զարությունյանի եղբայրն է: Մինչև իմա ականջներունս լսվում է Գուրգեն Զարությունյանի ձայնը... Մթերման գրասենյակը գտնվում էր «Զանգեզուր» թերթի խմբագրության հարեւանությամբ, իսկ այդ ժամանակ «Զանգեզուրում» էի աշխատում: Երբ գյուղերից գանգում էին, Գուրգեն Զարությունյանն ավանդական ալո-ի փոխարեն ասում էր՝ ըրեսուն ըրեսունհինգը լսում է... – Տարբեր ժողովուրդների պատմություն են դասավանդել աշակերտներին,

## Գուրգեն Զարությունյանն իր ժամանակակիցների հուշերում

Մեծ էր ու բարի

ՍՈՒՐԵՆ ՎԱՐՂԱՆՅԱՆ



Գաղտնիք չէ, որ յուրաքանչյուր սերունդ հասարակությանը ներկայանում է իր ուրույն նկարագրով: Գուրգեն Աբելի Զարությունյանն այսօր արդեն լիովին իր մայրամուտն ապրող սերնդից է, նրա դասական ներկայացուցիչը: Հիմա նրանցից մենք հազվագյուտների ենք հանդիպում: Ցավալի է, սակայն այդպես է, այսպիսին է կյանքի բնականոն ընթացքը:

Գուրգեն Աբելիչին ծանոթ էի 1970-ականների սկզբից, սակայն նրան խորապես հասցրել են ճանաչել 1980-ականների առաջին տարիներին՝ կարելի է ասել համատեղ աշխատանքից: Այդ ժամանակ գյուղմթերքների

վել էր Բաքվում, եղբորը՝ Աբելին, խնդրեց երեխային իր մոտ ուղարկել: Գուրգենի հայրը՝ Աբելը, ընդդիմացավ եղբոր խնդրանքին: Ինքը 1907-20թթ. եղել էր այդ քաղաքում, ինչպես ասում են, խմել՝ այդ քանից: Գյուղի միջնակարգն ավարտելուց հետո ավարտում է նաեւ Երեւանի հաշվապահական ուսումնարանը, վերադառնում եւ աշխատանքի անցնում գյուղի կոլտնտեսությունում՝ հաշվապահի օգնական, հետագայում դառնում տնտեսության գլխավոր հաշվապահը:

1949թ. ամուսնանում է ոչ միայն Զանգեզուրում, այլ նաեւ Զայաստանում ճանաչված Թովմասյանների տոհմի դուստր Զարեւայի հետ, ունենում չորս գավակ, ովքեր բոլորն էլ պատվով են կրում սիրելի ծնողներից ժառանգած ազնվությունն ու աշխատասիրությունը, իրենք էլ դրանք փոխանցում իրենց գավակներին:

1959-1964թթ. եղել է գյուղի կոլվարչության նախագահը: 1964թ. հուլիսից սկսած մոտ մեկ տարի ղեկավարել

– ասում է Գառնիկ Զարությունյանը, – սակայն ամեն մարդ սկզբից իր ժողովրդի, իր ծննդավայրի պատմությունը պիտի իմանա: Դա ինքնանպատակ չէ: Սեփական արմատների պատմությունն իմանալով, նա միշտ պատրաստ կլինի իր հայրենի եզերքի պաշտպանությանը՝ գիտակցելով, որ հայրենի եզերքից է սկսվում հայրենիքը, նաեւ այն տնից, ուր ծնվել ու մեծացել է ինքը:

Գառնիկ Զարությունյանը պատմության դասաժամերին աշակերտներին սովորեցրել է հավատարմություն մեկմեկու հանդեպ, հավատարմություն իրենց գերդաստանների ավանդույթներին, հարգել ազգային արժեքները, սրբությունները, քանի որ համուն սրբության մարդն ի վիճակի է անելու նույնիսկ անհնարինը:

– Ես աշակերտներին շատ զիտելիքներ են տվել նաեւ կյանքի մասին, այսինքն, նրանց կյանքի դպրոցն են ուսուցանել, որ ամենաբարձրն է, ամենադժվարը եւ կարեւորը: Այն մարդը, ով կյանքի դպրոց է անցել, միշտ պատրաստ է ժամանակի մարտահրավերներին: Կյանքի դպրոց է անցել նաեւ Գառնիկ

մթերման պետական տեսչության պետն էր, իսկ ես պատասխանատու աշխատանքի էի Հայաստանի կոմկուսի Գորխի շրջկոմում՝ ուղղակիորեն էի առնչվում գյուղատնտեսության խնդիրների հետ: Թիկունցում ունենալով աշխատանքի երկարամյա փորձ ու հարուստ գիտելիքներ, կազմակերպչի անվիճելի տաղանդ, նա առավել արդյունավետ էր իրականացնում տեսչության գործերը եւ իրեն հատուկ հեռատեսությամբ կանխատեսում ոչ միայն սպասվելիք արդյունքները, այլ նաեւ այդ ճանապարհի խոչընդոտները: Միշտ էլ, որ նրա կանխատեսումները հաճույքով էին ընդունվում շրջանի ղեկավարների կողմից, բայց միեւնույն է, դրանք նա հնչեցնում էր:

Նրա արժանիքներից մեկը մարդկանց հետ ճիշտ հարաբերվելն էր

ԺՈՐԱ ՄԱՆՈՒՅՏԱՆ



Գուրգեն Հարությունյանի գերդաստանը Շինուհայրում խոր արձաններ ունի եւ գալիս է հեռու ժամանակներից: Հայտնի էվուն տոհմը հետագայում բաժնավել է ճյուղերի, որոնք այսօր էլ կան եւ մեծ մասամբ բնակվում են Շինուհայրում՝ Ծատրյաններ, Վարդանյաններ, Մկրտումյաններ, Հայրապետյաններ, Հակոբյաններ, Բախչյաններ... Եւ նրանցից սերվող շատավիղներ:

Եվուն տոհմը գյուղում եւ գյուղից դուրս նշանավոր շատ մարդիկ է տվել՝ նախագործներ, գյուղատնտեսներ (եւ հատկապես գինեգործներ ու այգեգործներ), բժիշկներ, մանկավարժներ, զինվորականներ, պատմաբաններ... Տոհմի ճյուղերից կան շատավիղներից մեկն էլ Սարգսիսի ու Աբելի գերդաստանն է, որի գավակն է Գուրգեն Հարությունյանը:

Նրա հետ մեր համագործակցությունը սկիզբ է առնում 1950-ականների վերջից, երբ աշխատանքի անցա Շինուհայրի «Կոմունա» կոլտնտեսությունում, իսկ հետո դարձա գյուղի կոմերիտական կազմակերպության քարտուղար եւ գյուղի գործընթացում:

Այուրեքավար: Գուրգեն Հարությունյանի աշխատանքային, մարդկային ու կազմակերպական որակներն առավել լրիվ դրսևորվեցին այն ժամանակ, երբ ընտրվեց գյուղի կոլտնտեսության նախագահ: Բանիմաց ու գործարար ղեկավար էր, մարդ էր՝ բառի լավագույն իմաստով, բնականից օժտված լիդեր էր: Նրա ղեկավարման ընթացքում Շինուհայրի տնտեսությունը բարձր ցուցանիշների հասավ, գյուղում ստեղծվեց բարոյաժողով-բանական միանգամայն նոր ու դրական մթնոլորտ:

Նրա ղեկավարման տարիները համընկան գյուղը Որոտանի կիրճից ներկայիս վայր տեղափոխելու դժվարին ու պատասխանատու շրջանին: Սկիզբը 1963-ին էր... Այդ քննությունը նույնպես հաջողությամբ հանձնեց:

Տարիների ընթացքում Գուրգեն Հարությունյանը ճանաչում ձեռք բերեց Գորխի շրջանում, նաեւ տարածաշրջանի սահմաններից դուրս: Ժամանակի ընթացքում նրա գիտելիքները, մարդկանց հետ աշխատելու հմտությունը, կազմակերպական ունակությունները օգտագործեցին շրջանի մասշտաբով: Գուրգեն Հարությունյանը շատ լավ ընտանիք է ստեղծել: Կինը Ջաբելան էր՝ Հայաստանի խորհրդային հանրապետության ղեկավար Սուրեն Թովմասյանի քույրը: Դա էր պատճառը, որ բանիցս նրանց տանը հանգրվանել է Սուրեն Թովմասյանը: Իսկ 1958-ին կոմկուսի կենտրոնի 1-ին քարտուղարի հետ այդ օջախում հյուրընկալվել է ՀՀ կառավարության նախագահ Անտոն Քոչինյանը: Նրանք տարածաշրջան էին եկել՝ նախանշելու Տաթևիկի կառուցման դարակազմիկ ծրագիրը: ...Անկասկած, Գուրգեն Հարությունյանը բոլոր ժամանակների նշանավոր շինուհայրեցիներից է:

Ավագ ընկերոջ՝ Գուրգեն Հարությունյանի մասին



ԱՍԱՏՈՐ ԲԱՆԾՅԱՆ

Միջնակարգ հայրենի գյուղում ավարտելուց հետո նա իր ամբողջ կյանքը կապել է արտադրության հետ՝ ցուցաբերելով աշխատասիրություն ու կամքի մեծ ուժ՝ իրեն դիմակայած դժվարությունները հաղթահարելու վճռականությամբ:

Ծնվել է աշխատավոր ընտանիքում, ժառանգել աշխատասիրություն եւ մարդանոտություն: Միջվել ու հարգվել է շրջապատի մարդկանց կողմից: Իր ամբողջ կյանքի ընթացքում՝ կոպիտակով ու թոծվելով վիճակված փորձությունների մեջ, աներեր կերպով քայլեց առաջատար շարքերում ու իր կենսագրության հարուստ ու փառավոր էջերով օրինակելի շատ բան պարգևեց մեզ ու գալիք սերունդներին: Գուրգենի աշխատանքային գործունեությունը, պատասխանատու պաշտոններում ունեցած անբասիր ու հայրենամեկր ծառայությունը զնախադրել են ժողովրդի կողմից: Միջնակարգ դպրոցը, այնուհետեւ Երևանի հաշվապահական ուսումնարանն ավարտելուց հետո յոթ տարի աշխատել է Շինուհայրի «Կոմունա» կոլտնտեսությունում՝ գլխավոր հաշվապահ: Միաժամանակ աշխատել է կոլտնտեսության սկզբնական կուսկազմակերպության քարտուղար, հինգ տարի նույն կուլարչության նախագահ: Կոլտնտեսության բազայի վրա պետական տնտեսություն՝ սովխոզ ստեղծվելուց հետո՝ 1964թ., Գուրգենն ազատվում է զբաղեցված պաշտոնից, եւ մեկ տարի հետո Գուրգենին տեսնում ենք այդ տնտեսության (սովխոզի) դիրեկտորի պաշտոնում: Տաթևիկի շինարարությունը կլանել էր գյուղի ողջ բնակչությանը: Գուրգենը կարողացավ բավարարել գյուղական բնակչության պահանջները՝ վայելելով մեծ հարգանք ու ժողովրդականություն: Աշխատել է շրջանի մի շարք պատասխանատու պաշտոններում՝ Գորխի հիշեց հարգանքներով, մթերությունների տեսչությունում, շրջխորհրդի պլանային բաժնում: Աշխատանքի այս բնագավառները դարձյալ մեծ ուշադրության էին արժանի, խելացի ու կորդիկացված աշխատանք պահանջող: Գուրգենի աշխատանքային ծառայությունների շարքում իր ուրույն տեղն ունի գյուղը Որոտանի անդամախոր կիրճից հարթավայր դուրս բերելը: բացառապես սեփական նախաձեռնություններ, մի ամբողջ գյուղ տեղափոխելու վատահեղի, բավական մեծ, բայց դժվար ու պատասխանատու գործընթաց, որի ժամանակ կրկին զուգակցվեցին ղեկավար աշխատողին հատուկ որակները, եռանդը: Նրա՝ գյուղից բացակայելուց հետո (օբյեկտիվ պատճառով) նորակառուց գյուղի շինարարությունը շարունակվեց, բայց գյուղի բնակչությունն անցավ մաքառումների մեծ, սակայն իմաստավորված ճանապարհ: Գուրգեն Հարությունյանն ընտանիքի լավ հայր էր, օրինակելի ծնող, աճեցրել ու դաստիարակել է գեղեցիկ սերունդ: Այդ, դժվար է այսօր հաշտվել այն մտքի հետ, որ այլևս մեզ հետ էլ մեզ համար այնքան սիրելի բարեկամն ու խորհրդատուն իր ազդու, կրթու ու դիպուկ, բարի խորհուրդներով: Նրա մահվանից տարիներ հետո անգամ ըստ արժանվույն գնահատում ենք նրա ծառայությունները, մեր սրտերում վառ պահում նրա հիշատակը: ■

Է Գորխի հացի գործարանը, իսկ 1965թ. օգոստոսից նորից Շինուհայրում է, այս անգամ գյուղի պետական տնտեսության (սովխոզի) տնօրեն: Գյուղական տնտեսություն ղեկավարելը դժվարին աշխատանք է, իսկ Շինուհայրի նման բազմաճյուղ, բարդ տնտեսություն ղեկավարելը՝ առավել եւս: Պատկերն առավել ամբողջակապես դարձնելու համար հավելեմք, որ Գուրգեն Հարությունյանի կողմից Շինուհայրի տնտեսության ղեկավարման տարիները համընկան, ինչպես ժողովուրդն է ասում, գյուղը ծորից բարձրանալու տարիների հետ: Դրանով ամեն ինչ է ասվում, կամ՝ համարյա ամեն ինչ: Այն տարիներին տարածքը, որտեղ այսօր փռված է Շինուհայրը, մի հսկա շինարարական հրապարակ էր: Մարդիկ ապրում էին եւ կառուցում, արարում: Սկսվել է արագ թափով առաջ էր տարվում նաեւ Տաթևիկի շինարարությունը, որը պակաս դերակատարում չունեցավ թե՛ գյուղի կառուցապատման եւ թե՛ հետագա տարիներին նրա զարգացման

գործընթացում: Անցած դարի 70-ականներին Շինուհայրը տարածաշրջանի ամենամեծ գյուղն էր, մոտ 3000 բնակչով: Եվ մի քանի տարի, եւ գյուղում գործարկվեց միութենական ենթակառուցված շինարարական գործարանը՝ 700 աշխատատեղով: Դա փաստ էր եւ երեսույթ ամբողջ հանրապետությունում: Դրանում որոշակի դերակատարում ուներ նաեւ Գուրգեն Հարությունյանը: Հայտնի բան է, եթե ցանկանում ես որեւէ մեկի մասին լիարժեք կարծիք կազմել, բավարար չէ նրա ընտանիքի անդամներին, հարազատներին ճանաչելը, հարկ է հանդիպել նաեւ նրա ժամանակակիցների, ընկերների հետ: Բայց, ինչպես դիպուկ նկատում է մեր ավագ ընկեր Սուրեն Վարդանյանը. «Գուրգեն Աբելի Հարությունյանն այսօր արդեն լիովին իր մայրամուտն ապրող սերնդից էր, նրա դասական մերկայացուցիչը: Հիմա նրանցից մենք հազվագյուտների ենք հանդիպում: Ցավալի է, սակայն այդպես է, այսպիսին է կյանքի

բնականոն ընթացքը»: Այո, նրանցից շատերն արդեն չկան, բայց նրանք մնացել են ոչ միայն իրենց ստեղծածով, այլ նաեւ իրենց խիստ մարդկային ելույթով: Ասա՛ որ է ընկերը, ասեն, թե դու ով ես: Գուրգեն Հարությունյանի ընկերներից մեկի՝ Արամ Հարությունյանի մասին հպանցիկ ասացինք: Նա ընկերություն էր անում Անդրանիկ Սրայանի, Լենո Ջիանգիրյանի, Նորբե Գրիգորյանի, Մացո Թեւոսյանի, Մամիկոն Հարությունյանի հետ, իսկ Սուրեն Բակունցն ու ինքն այնքան հոգեհարազատ էին, որ հաճախ ինչ-որ բան հաղորդելու համար բառերին չէին դիմում, բավարարվում էին հայացք փոխանակելով: Խիստ ուշադիր էր հատկապես երիտասարդների նկատմամբ, ջանում էր խրախուսել նրանց նախաձեռնությունները, օգնել խորհուրդներով: Շատ կարճ ժամանակամիջոց (1969թ. մի քանի ամիս) աշխատել է շրջկոմպի

էջ 6

Հարությունյանը: Եվ նա գիտի մի պարզ ճշմարտություն եւս. տղամարդն ընտանիք կազմելուց բացի, նաեւ պիտի ծառ տնկի, այգի հիմնի... Ընտանիքն էլ, ծառն էլ սերնդի համար եւս: - Հայրս լավ այգի է ունեցել, անմահական այգի՝ անմահական մրգերով: Ես նրանից սովորեցի ծառի «լեզուն»: Իմ հիմնած այգում 10 տեսակի պտղատու ծառ կա: Կյանք եմ ներդրել իմ այգում, որ այգին այգի դառնա, ծառը՝ ծառ: Հիմա չեն մշակում այգիս, տարիքս թույլ չի տալիս: Այգիս հիմա տվել եմ ուրիշի՝ առանց վարձակառության: Մշակողը թող բերքը հավաքի տանի իր տունը, ինձ պետք չէ, միայն մի պայման եմ դրել նրա առջեւ՝ ծառերը ժամանակին ջրի-խնամի, ծառերը կենդանի պահի: Եթե ծառերս կենդանի են, ուրեմն ես էլ եմ կենդանի: Նրանարդը պիտի ծառայի բանակում, որ տղամարդ դառնա: Սա տղամարդու կարեւոր առաքելություններից մեկն է: Նա պիտի ծառայի, որ իմանա հայրենիքի հարզը, որ տեղը եկած ժամանակ կարողանա պաշտպանել իր ընտանիքը, որ տղամարդը տղամարդու արժանա-

պատվություն ունենա: Հիշում եմ իմ երիտասարդության տարիները, այն տղաները, ովքեր բանակում չեն ծառայել, նրանց հետ աղջիկները դժվարությամբ էին ամուսնանում, որովհետեւ նրանց անվանում էին «նիգողմի»: - Հիմա ի՞նչ կասես այն տղաների հասցեին, ովքեր խուսափում են բանակում ծառայելուց: - Ես նրանց ասելիք չունեմ, միայն կհիշեցնեմ՝ հայրենիքը բոլորինս է: Հայրենիքը շենացնելը, պաշտպանելը բոլորիս պարտականությունն է: Գառնիկ Հարությունյանը չորս երեխա ունի: Բոլորն էլ բարձրագույն կրթություն են ստացել, աշխատում են Հայաստանում, Ռուսաստանում, Եստոնիայում: - Հոգիս ցավ ունի, - ասում է Գառնիկ Հարությունյանը, - ինչո՞ւ պիտի իմ երեխաներից երկուսն ուրիշ երկիր շենացնեն: Քիչ լռելուց հետո շարունակում է. - Երեք երեխաներիս դիտողություն չեմ արել ոչ մի հարցում: Նրանք խելոք են եղել, գիտեին՝ որը որից հետո է, ինչն ինչպես պետք է անել:

- Ի՞նչ ցանկություն ունես: - Կուզեմ, որ հայրց աշխարհը չենանա, բարգավաճի, աշխարհով մեկ սիրված հայերը տուն դառնան: Ծնողը զավակին տեսնելու համար «սկայալը» չմիացնի, վերանան, կորչեն «սկայալերը»: Հա, լսում ես զավակիդ ծայրը, տեսնում նրան, նրա ընտանիքը, նրա տունը, միտ ու կացը: Բայց դա չի լցնում հոգիդ, հոգուդ մի մեծ անկունն էլի մնում է դատարկ: Դա կարողի, ջերմության, սիրո անկյունն է: «Սկայալը» կարող չի փարստում, ուզում ես հպվել երեխայիդ, զրկել նրան, զգալ նրա շունը: Տա ասուկած, որ Հայաստանից էլ երեք ոչ մեկը չհեռանա, այլ վերադառնան որդիքը Հայաստանի, եւ Հայաստանի ամեն մի անկյունում միշտ վերադարձի կենացներ խմեն: Հարցնում եմ եղբոր՝ Գուրգեն Հարությունյանի մասին: - Այդպիսի եղբայր ունենալ շատ-շատերը կերպագին: Բայց, Աստուծո կամքը, այդ բախտն ինձ է վիճակվել: Ու ես ինձ համարում եմ երջանիկ մարդ: ԱՆԿԱՐԳ ՄԵՏՈՐՊՅԱՆ

Հիմնուհայրի գերդասաններին մեկը

# Մարդն ապրում է, քանի դեռ նրան հիշում են

Եջ 5  
Նախագահ: 1970 թվականից մինչև 1987թ. բարձր պատասխանատվությամբ ղեկավարել է Գորիսի շրջանի մթերումների տեսչությունը:

Մարդկային հարաբերությունների հետ կապված արտաքուստ չերեւացող մի դրվագ կա այս աշխատանքին Գուրգեն Գորիսյանի անցնելու հետ: Բոլորը չէ, որ ընդունում էին նրան, ընդունում մարդկանց հետ աշխատելու, արտադրություն ղեկավարելու նրա կազմակերպական ակնհայտ բարձր ունակությունները: Կային նաեւ չկամներ, այդ թվում նաեւ շրջանային մակարդակի ղեկավարների մեջ, որոնցից մեկը հրամանագրվելու համար մայրաքաղաք մեկնելու նախօրյակին Գուրգեն Գորիսյանին «բարեմաղթում է»՝ գնա, միեւնույնը է, չեն հաստատելու, ակնարկելով նրա բարձրագույն կրթությունը չունենալու փաստը: Գուրգեն Գորիսյանը չէր կարող անպատասխան թողնել մեզ խոսքերը՝ եթե թեզ հաստատել են, ինձ կհաստատեն ու կհաստատեն:

Մթերումների վարչության երիտասարդ պետի աշխատանքակազմում գրույցը շատ կարճ է տեսնում: Պետը հարցնում է, թե ինչու բարձրագույն կրթություն չի ստացել: Երեւի սպասելիս է եղել այդ հարցին, ուրեմն եւ պատրաստել էր պատասխանը.

**- Մեր սերունդն աշխատում էր, որ դուք բարձրագույն կրթություն ստանաք:**

Պետը մի պահ զարմացած նրան է նայում, հետո զլուխը հակում, ինչ-որ բան գրում ու ժպտալով նրան մեկնում նշանակման հրամանը:

Գուրգեն Գորիսյանը չափազանց զգայուն անհատ էր, հոգատար հարազատների նկատմամբ: Նոր ժամանակներն ու բարքերը չէին կարողացել նրա մեջ խեղդել իր պայքարի ժառանգած լավ ու բարին, որն էլ նա իր հերթին որպես ժառանգություն փոխանցել է զավակներին, թոռներին: Հասկանալի բան է, որ պայքար կսիրի իր թոռներին: Նրանց անսահմանորեն սիրում էր նաեւ Գուրգեն պայքար, բայց այդ սերն ավագ՝ Դրաստամատի որդու նկատմամբ ոչ մեկի հետ չեն համեմատի: Պատճառն ինձ բացատրեցին, թոռան անունն ինքն է դրել, Մեծ հայրենականից չվերադարձած ավագ եղբոր անունն է, որի հետ անբացատրելի սիրով էր կապված:

Այս հոդվածի վրա աշխատելու ընթացքում Գորիսյանի ընտանիքի, տոհմի անդամներից շատերի հետ հանդիպեցի, շփվեցի: Բուրբուրում էլ զարմացած չեմ, որ նրանք իրար նկատմամբ լցված են սիրով ու հարգանքով, բայց խիստ զարմա-



Գուրգեն Գորիսյանի մեծ պարբերական չվերադարձած եղբայր՝ Դրաստամատի Գորիսյանը

ցած են, որ այն ակնառու է հատկապես ավագների մոտ: Մեր օրերում, երբ նույնիսկ արյունակից բարեկամները դեպքից դեպք են այցելում իրար (եւ այն էլ խիստ անհրաժեշտության ու հույժ կարելության դեպքում), հուզիչ եւ ուսանելի է Գուրգեն Գորիսյանի վերաբերմունքը եղբոր հիշատակի, նրա ընտանիքի յուրաքանչյուր անդամի նկատմամբ: Նա մասնագիտությամբ մանկավարժ է եղել: Քսան տարուց ավելի է, ինչ կենսաբույսի է անցել, բայց այսօր էլ իր վարքագծով, հասարակական ակտիվ դիրքորոշմամբ շարունակում է ուսանել իր շրջապատին, մեզ բուրբուրիս:

Գուրգեն Գորիսյանի երկրորդ որդին՝ Արշավիրը, պատմում է.

**- Սիրում էր շուկա գնալ: Հասկանալի է, որ քո շուկայում անորակ միտք կամ բանջարեղեն չի ընտրում, բայց նրա աչքն ուրիշ է:**

Նրա ծեռամբ պատրաստված անմահական գինու ու որակի մասին այսօր էլ են պատմում, այնպես են պատմում, որ մի պահ լսողին թվում է, թե ինքն էլ է համոտեւել այն: Հավանաբար գինի պատրաստելու արվեստը (այդ, դա արհեստ է) եւս նա ժառանգել էր իր ավուպայքերից:

Որոտանի կիրճի խաղողի էնդեմիկ տեսակներից նրանց պատրաստած գինու համբավը դեռեւս 20-րդ դարի սկզբներին էր հասել այդ աստվածային խմիչքի հարգն իմացող երկիր՝ Ֆրանսիա, մրցանակ

բայց շտապ վերադառնում է եւ ասում.  
- Տեր հայր, քեզ դրսից կանչում են, ինչքան խնդրեցի ներս գալ, չեկավ, - ասաց՝ քահանային բան ունի ասելու:  
Տեր հայրը տեղից բարձրանում է, որ դուրս գա, Գորիսյանը ասում է.  
- Տեր հայր, փիլոսոֆ, գլխարկը էլ վերցրու, դրսում շատ ցուրտ է, չմոռես, համ էլ կարողաք թեզ կանչողը երկար զբաղեցնի:  
Քահանան դուրս է գալիս, բայց ոչ ոքի չի տեսնում:  
Զենց որ քահանան ոտք է դնում փողոց, Գորիսյանը նրա հետեւից փակում է դարպասի դուռը եւ ասում.  
- Տեր հայր, կգնա Երբ տուն եւ ձեր տափակ տոնը կբացես, կիրավիրես մարդկանց ու պատիվ կտաս:  
Այնուհետեւ Գորիսյանը դառնում է հյուրերին ու հարցնում՝ արդո՞ք ինքը սխալ է վարվել:  
- Բնավ, Աբուն, դու ճիշտ ես... ■

## Ավանդազրույց Աբել Սարգսյանի հոր՝ Գորիսյանի մասին

Գորիսյանն ունեցել է գինու յոթ կարաս: Կարասներից մեկը տափակ կառուցվածք ուներ: Ասում են, որ ամենալավ գինին պահում էր այդ կարասի մեջ: Գորիսյանը թե՛ էր կազմակերպել: Սովորական համաձայն գինու որակ որոշողը գյուղի քահանան է լինում՝ տեր Ստեփանը, ով աշխարհիկ վայելքներից հեռու չէր: Գորիսյանը մի գավաթ գինի էր քերում է մեկնում քահանային: Քահանան համոտեւեց անելուց հետո ասում է.  
«Աբուն, սա տափակ տոնի գինին չէ»: Նորից քերում է մի այլ կարասից, քահանան համոտեւեց ու կրկնում է՝ եւ էլ տափակ տոնից չէ: Այդ պահին Գորիսյանը դուրս է գալիս իբր երրորդ գավաթը քերելու, ■

## Գուրգեն Գորիսյանի մասին

Ծնվել է Հիմնուհայր գյուղում 1927թ.: Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո աշխատել է Հիմնուհայրի «Կոմունա» կոլտնտեսությունում, այնուհետեւ Գորիսի հրշեջ խմբում, 1949թ. ապրիլից՝ կրկին գյուղի կոլտնտեսությունում՝ հաշվետար: 1950-51թթ. սովորում է Երեւանի հաշվապահական ուսումնարանում: Ավարտելուց հետո՝ 1952թ. մարտից, աշխատում է կոլտնտեսության գլխավոր հաշվապահ մինչև 1959թ.: 1954-59թթ. միաժամանակ Հիմնուհայրի կոլտնտեսության սկզբնական կուսկազմակերպության քարտուղարն էր: 1962թ. մայիսից մինչև նույն թվականի հոկտեմբերն աշխատել է Գորիսի գյուղկոոպի նախագահ: 1959թ. հոկտեմբերից աշխատել է Հիմնուհայրի կոլտնտեսության վարչության նախագահ մինչև 1964թ. հունվար: Այնուհետեւ՝ մինչև 1965թ. օգոստոսն աշխատել է Գորիսի հացի գործարանի դիրեկտոր: 1965թ. օգոստոսից մինչև 1969թ. հունիսն աշխատել է Հիմնուհայրի պետական տնտեսության (սովխոզի) դիրեկտոր:

Կոլտնտեսության նախագահ աշխատելու տարիներին պատվիրակության կազմում հյուրընկալվում է Երեւանի գինու կոմբինատում: Համոտեւի սրահում մի քանի գինիների հետ «ժամոթանալուց» հետո որոշ դիտողություններ է անում: Դրանք լսելուց հետո կոմբինատի ղեկավարությունը խստովանում է, որ հյուրի նկատած թերությունների մասին իրենք գիտեն, որովհետեւ դրանք բացահայտելու համար մի ամբողջ լաբորատորիա են պահում ու նրան առաջարկում են մնալ, ղեկավարել այդ լաբորատորիան: Գուրգեն Գորիսյանը շնորհակալությամբ հրաժարվում է, պատճառաբանելով, որ ինքը մասնագետ չէ, եւ հետո էլ՝ աշխատանք ունի, որ շատ է սիրում:

Շատերի ման եւ ի համոզված են, որ հումորի զգացումն աստվածատուր է, շնորհի, այն գիտելիք չէ, որ աշխատասիրությամբ ձեռք բերես: Աստված մարդուն այն տվել կամ էլ չի տվել: Այդ շնորհով էլ արարիչը Գուրգեն Գորիսյանին օժտել էր շալվորեն, իսկ նա կարողանում էր օգտագործել նրբորեն ու տեղին, երբեմն էլ դրան մի քիչ հեզմանք խառնելով, որն ավելի մեծ սրություն էր հաղորդում հումորին, նրան տալիս գրական մանրապատկերի տեսք: Կփործեն դրանցից մեկ-երկուսը պատմել:

Մասնավարժական ուսումնարանի հայտնի պահակ Գիրիշը գորագրվելուց հետո վերադառնում է հայրենի Հիմնուհայր: Մի քանի օր անց դիմում է նախագահին՝ իրեն աշխատանք տալու խնդրանքով: Նրան են վստահում կոլտնտեսության 30-40 զխից կազմված հիվանդ ու նվազ մատուցողի հոտը: Գիրիշի սեւ բախտից հենց առաջին օրը հորթերից մեկը սատկում է: Բնականաբար, Գիրիշը գեկուցում է նախագահին: Երկրորդ օրն էլ է մեկը սատկում: Հասկանալի է՝ գեկուցվում է: Երրորդ հորթը սատկելու մասին նախագահին տեղյակ պահելը համընկնում է նախագահի մոտ կարելու խորհրդակցության հետ: Չդաճացած նախագահը կարգադրում է՝ մնալ հարցերով էլ իր մոտ չգալ: Ինչպես հայտնի ֆիլմում են ասում՝ Նաջարյանի ասածն օրենք է: Երբ վերջին հորթն էլ է սատկում, Գիրիշը հավաքում է իր ամբողջ համարձակությունը եւ մտնում նրա գրասենյակը եւ գեկուցում նախագահ, «ե՛ց», էլ հորթ չկա... ■

Երկրորդը եւս նախագահ աշխատած տարիներից է մնացել մարդկանց հիշողության մեջ: Բանակից զորացրված երիտասարդն աշխատանք է խնդրում՝ չնուսանալով շեշտել, որ բանակում տանկիստ է եղել: Նախագահը նրան աշխատանք է առաջարկում ֆերմայում, այգիներում, կալում, բայց երիտասարդը չի համաձայնում: Գնում է, գալիս եւ անընդհատ հիշեցնում, որ բանակում տանկիստ է եղել: Զերթական այցելության ժամանակ նախագահը կանխում է նրան.

**- Երիտասարդ, թեզ տղամարդու խոսք են տալիս, կոլխոզը հենց առաջին տանկը ստանա՝ թոնն է, իսկ առայժմ**

1970-87թթ. Գորիսի շրջանի մթերումների գլխավոր տեսուչն էր, 1988-89 թվականներին՝ Գորիսի շրջափոխողի գործկոմի պլանային բաժնի տնտեսագետը:

Աշխատած բոլոր ոլորտներում ցուցաբերել է կամքի մեծ ուժ, եռանդ ու նվիրվածություն, մասնագիտական պատրաստվածություն, հմտորեն զուգակցել աշխատանքային փորձն ու աշխատասիրությունը: Եղել է մարդանոտ, ժողովրդասեր ու սիրվել, հարգվել է հանրության ու ղեկավար մարմինների կողմից:

Գուրգեն Գորիսյանն ամուսնացել է համագյուղացի Չարեւա Թովմասյանի հետ եւ ունեցել երկու տղա, երկու աղջիկ: Դրաստամատը, Արշավիրը եւ Տաթևիկը ստացել են բարձրագույն կրթություն, իսկ Ջեմման ավարտել է Կապանի թժշկական ուսումնարանը: Կինը՝ Չարեւա Թովմասյանը, ծնված 1926թ., միջնակարգ կրթություն ստանալուց հետո աշխատել է Հիմնուհայրի գյուղխորհրդի գործկոմի քարտուղար, ապա՝ դպրոցի ավագ ջոկատավար: Բոլոր աշխատանքներում էլ իրեն լավագույնս է դրսևորել:

## «Այսպես ապրեցին»

Հատված



Ռատմական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր

...Լավ երկարագործներից է Հովհանն Աբելը: Ասում են, նրա մեծ պապ Սաքոն, երբ ամուսնանում է սիսիանցի մի փոքրամարմին աղջկա հետ, այդ առիթով բարեկամները հավաքվում են տանը: Հարցը տղամարդկանց մոթալ մեծ-մեծ փափախները գլխներից վերցնում է, այդ ժամանակ մեկն ասում է.

- Սաքո, տունդ հա՞րս ես բերել, թե՞ հոլ կամ ուլ:

Աբելն իր եղբայր Իսակի հետ մինչև 1920թ. աշխատել է Բաքվում, Իսակը 1920թ. մտնում է բոլշևիկյան կուսակցության շարքերը, հետո նշանակվում Հալիճորի ենթաշրջանի, այնուհետեւ՝ Սիսիանի կուսընկերության առաջին քարտուղար: Մահանում է 1920 թվականին: Նրա որդիները Դրաստամատը մասնակցել է Գորիսյանական մեծ պատերազմին եւ գոհվել Քյոնիգսբերգում: Աբել Սարգսյանն ամուսնանում է գյուղի քահանա տեր Գիրիշի աղջկա՝ Շուշանիկի հետ, որովհետեւ լավագույն ընտանիք: Ունեցել է հինգ տղա, մեկ աղջիկ... ■

**գնա հորթերը պահիր:** Տանկիստը գոհ ու շնորհակալ դուրս է գալիս նախագահի աշխատասենյակից:

\*\*\*  
15 տարուց ավելի է՝ ֆիզիկապես նա չկա: Բայց կա, մնում է նրա անունը, նրա հիշատակը պահում են ոչ միայն նրա հարազատներն ու մտերիները, այլև բոլոր ճանաչողները, որովհետեւ ինքն է դրել դրա հիմքերը, հետք է թողել այս աշխարհում:  
Հին իմաստություն կա՝ մարդն ապրում է, քանի դեռ նրան հիշում են:  
**ՌԵՐԻԿ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

# Մեր գործընկերը 60 տարեկան է

«Մարդն այնքան տարեկան է, որքան զգում է, իսկ ես ինձ զգում եմ, ինչպես 30 տարեկան», - հաճախ է սիրում կրկնել «Այոնյաց երկիր» թերթի գլխավոր խմբագրի տեղակալ, երեք տասնյակ տարիներից ավելի լրագրողական գործունեությանը նվիրված Վահրամ Օրբեյանը, ով հունվարի 27-ին բուրժուական 60-ամյակը: Մերում է արդյոք Օրբեյանների նշանավոր փոփոխությունը, թե՛ ոչ, չգիտի, բայց իր գրելու շնորհի համար «պարտական» է Վաչագանին:



Վերջերս հաճախ էր խմբագրությունում բարձրաձայն ընթերցում Սերվանտեսի «Դոն Կիխոտ» վեպի ծիծաղաշարժ հատվածներից՝ ներկաներին նույնպես վարակելով իր ծիծաղով: Բացի գրելու ծիրքից, որ հավանաբար ժառանգել է վաչագանյան արմատներից, օժտված է նաև դերասանական շնորհով: Երբեմն նմանակում է մարդկանց, որոնց աշխատանքի բերումով հանդիպում է եւ որոնք առանձնանում են որոշակի ոչ ստանդարտ հատկություններով, երբեմն սիրում է «Ոսկե հորթ» ֆիլմի հետաքրքիր դրվագները դերասանական վարպետությամբ ներկայացնել:

Վահրամ Օրբեյանին բնութագրելն այնքան էլ հեշտ չէ, քանզի նա երբեմն հանգիստ է, երբեմն պոռթկում, երբեմն բարի, երբեմն նյարդային. պատահում է՝ որեւէ հանձնարարական կատարելուց առաջ սկսում է զայրանալ՝ տպավորություն ստեղծելով, որ այն ժամանակին ավարտին չի հասցնի, բայց որոշ ժամանակ անց ամենայն պատասխանատվությամբ է խնամքով առաջադրանքը կատարված է լինում:

Ընկերասեր է, բարեկամասեր, հավատարիմ, ճշմարտախոս: Ինչպիսի արագությամբ զայրանում է, նույնպիսի արագությամբ էլ հանդարտվում է՝ ծիծաղելով ասում. «Պե՛տե՛ մե՛ծ մարդ եմ, կպատահի», բայց հաջորդ պատեհ առիթին էլ ասում է. «Ես տակալին երիտասարդ եմ»:

Հիշում եմ՝ ինչպես էր ոգեւորվել, երբ քրոջը թոռնիկ ծնվեց, կամ թոռնիկներից մեկն առաջին դասարան հաճախեց: Վահրամ Օրբեյանն ապրում է հարազատների հաջողություններով, ձեռքբերումներով, տխրում նրանց անհաջողություններից:

Ինչեւէ, ծննդյան տարեդարձը մարդկանց համար եւս մեկ առիթ է հետ մայելու, գնահատելու անցած-գնացածը, երասկացություններ անելու, մի խոսքով՝ հետադարձ հայացք ձգելու, բայց ապագային վստահորեն նայելով:

«Այոնյաց երկիր» թերթի խմբագրականը շնորհավորում է Վահրամ Օրբեյանին, մարդուն նրան առողջություն, բազում հաջողություններ, լրագրողական անսպառ գործունեություն, եւ ինչպես ինքն է ասում, սրտի խորքում պահված ցանկալի երազանքների իրականացում:

**ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**



Ջաջար Խաչատրյան, Լենինգրադի կամուրջները եւ ջրանցքները

# Կյանքից հեռացավ նշանավոր նկարիչ Ջաջար Խաչատրյանը



**Հունվարի 21-ին՝ կյանքի 92-րդ տարում, Սանկտ-Պետերբուրգում մահկանացու կնքեց նավոր նկարիչ Ջաջար Խաչատրյանը:**

Ծնվել է 1924թ. Սիսիանի շրջանի Սառնակունք գյուղում: Սովորել է ծննդավայրի եւ շրջակայքի դպրոցներում: Մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին եւ ծանր վիրավորվելուց հետո վերադարձել ու սովորել Գորիսի մանկավարժական տեխնիկումում, ապա՝ Երեւանի երաժշտական ուսումնարանում: 1956թ. ավարտել է Լենինգրադի Ի.Ռեպինի անվան գեղանկարչության, քանդակագործության եւ ճարտարապետության ինստիտուտը, ստեղծագործել Երեւանում եւ Սիսիանում: 1960 թվականից կատարելագործվել է ԽՍՀՄ գեղարվեստի ակադեմիայի պրեզիդենտ Ալեքսանդր Գերասիմովի արվեստանոցում, աշխատել նաև Բորիս Իոզանսոնի հետ: 1962թ. Սիսիանում ստեղծել է մանկական նկարչական ստուդիա, որը հետագայում դարձել է գեղարվեստի դպրոց (1998թ. կոչվել է նրա անունով):

1967թ. տեղափոխվել է Երեւան, ղեկավարել ուսուցիչների վերապատրաստման հանրապետական ինստիտուտի կերպարվեստի կաբինետը, դասավանդել Խ.Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտում, աշխատել ամբիոնի վարիչ, գեղանկարչության ֆակուլտետի ղեկավար:

1986թ. ստացել է պրոֆեսորի կոչում: ԽՍՀՄ եւ Հայաստանի նկարիչների միության, 1995 թվականից Սանկտ-Պետերբուրգի գիտության եւ արվեստի պետական ակադեմիայի

անդամ էր: 1983թ. ստացել է ՀՀ վաստակավոր, 2005թ.՝ ՌԴ վաստակավոր, 2012թ.՝ ՀՀ ժողովրդական նկարիչ կոչում:

Պարգևատրվել է ժուկովի, «1941-1945թթ. Հայրենական մեծ պատերազմում Գերմանիայի դեմ տարած հաղթանակի համար», «Արիության համար», «Կովկասի պաշտպանության համար», «Վարչավարչական ազատագրման համար», «Բեռլինի գրավման համար» մեդալներով, «Հայրենական մեծ պատերազմի 1-ին եւ 2-րդ աստիճանի» շքանշաններով, «Կարմիր Աստղ» մեդալով, «1941-1945թթ. Հայրենական մեծ պատերազմի 50-ամյակ» հուշամեդալով: Հայրենական մեծ պատերազմի մասնակիցների՝ Սանկտ-Պետերբուրգի վետերանների խորհրդի նախագահն էր:

2015թ. պարգևատրվել է Հայ առաքելական եկեղեցու «Սուրբ Սահակ եւ սուրբ Մեսրոպ Մաշտոց» շքանշանով:

2006թ. Սիսիանի իրենց առանձնատունը նվիրել էր պետությանը՝ իր եւ եղբոր՝ իսպանի քանդակագործ Արտաշես Հովսեփյանի տուն-թանգարան դարձնելու մտադրությամբ: ՀՀ մշակույթի նախարարության ֆինանսավորմամբ 2016թ. հոկտեմբերին սկսվել է նաև տուն-թանգարանի հիմնանորոգումը աշխատանքները:

Հեղինակ է բազմաթիվ գործերի, որոնց մեջ գերակշռում են բնապատկերն ու դիմանկարը: Ունի ուժեղ գունալի մտային ըմբռնողություն, հստակ ոճ, ազգային ավանդույթների պահպանման ու զարգացման անթաքույց ձգտում: Նրա լավագույն գործերից են՝ «Արագած-ծաղիկներ», «Մթնշաղ», «Սիսիան», «Ուռեցիներ», «Կեչիների պուրակ», «Իշխանասար», «Ա.Վ.Գերասիմով», «Վիրաբույժ» եւ այլն:

Անհատական ցուցահանդեսներ է ունեցել Սանկտ-Պետերբուրգում, Մոսկվայում, Հայաստանի, Շվեյցարիայի, Հնդկաստանի, Շվեդիայի, Ֆինլանդիայի տարբեր քաղաքներում:

Նրա գործերը պահվում են Տրետյակովյան (Մոսկվա), Պետերբուրգի, Երեւանի եւ այլ քաղաքների պատկերասրահներում:

Հայ ժողովրդի արժանավոր գավառի մահվան կապակցությամբ «Այոնյաց երկիր» թերթի խմբագրականը ցավակցում է մեծանուն սյուներու հարազատներին ու մերձավորներին:

«Այոնյաց երկիր»

# Երեք ոսկի, երկու արծաթ

**Դեկտեմբերի 17-ին եւ 18-ին Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում կայացած Եվրասիայի գավաթի ակումբային առաջնությանը մասնակցում էին նաև Սյունիքի մարզի «Գարեգին Նժդեհ» ակումբի մարզիկները:**

Միջազգային այդ մրցմանը բացի Հայաստանից մասնակցում էին իննգ երկրի՝ Իրանի, Ուկրաինայի, Ռուսաստանի Դաշնության, Ադրբեջանի եւ տանտերերի՝ Վրաստանի հավաքականները: Ակումբի մարզիչ, ՀՀ վաստակավոր մարզիչ Արայիկ Սարգսյանի սաները հաջող քննություն բռնեցին ներկայացուցչական այդ առաջնությունում: Նրանցից Նոյ Անտոնյանը (30 կգ քաշային կարգ), Երիկ Մարտիրոսյանը (33 կգ) եւ Ալեն

Ավավերդյանը (47 կգ) դարձան հաղթողներ, իսկ Վաչե Գյուլբուրդյանը (28 կգ) եւ Դավիթ Բաբախանյանը (32 կգ) դարձան երկրորդ մրցանակակիր: Բացի այդ տեխնիկական գրագետ մարտ վարելու համար Ալեն Ավավերդյանը եւ Երիկ Մարտիրոսյանը արժանացան չեմպիոնական գոտիների: Ընդ որում՝ Ալենը եզրափակիչ մարտում նոկաուտով հաղթեց ռուսաստանցի մարզիկին:

«Գարեգին Նժդեհ» ակումբի սաների այս հաջող մրցելույթը հնարավորություն ընձեռեց 2017-ի մարզական տարում մասնակցել միջազգային մրցումների, այդ թվում՝ մարզածեղի աշխարհի եւ Եվրոպայի առաջնություններին, ինչպես նաև Ռուսաստանի Դաշնության եւ Ուկրաինայի քիթբռնիկի բաց առաջնություններին: Հասկա-

պես այս երկրներում մարզածեղ զարգացած է, ինչը հնարավորություն է ընձեռում մրցավորձ ձեռք բերել: Իհարկե, եթե հովանավորներ գտնվեն: Իսկ այս մրցմանը կապակցի մարզիկների մասնակցությունը հնարավոր դարձավ «Նորոզին» եւ «Ռագբիդինգ» ընկերությունների տնօրեններ Ռազմիկ եւ Գեորգ Փարսյանների, ինչպես նաև «Պրինց» համալիրի տնօրեն Էդգար Հակոբյանի հովանավորության շնորհիվ, ինչի համար ակումբի մարզիչը, սաները եւ նրանց ծնողները երախտագիտություն են հայտնում: Դեկտեմբերի 22-ին Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանը ընդունեց «Գարեգին Նժդեհ» ակումբի միջազգային առաջնությունից հաղթանակով վերադարձած բռնցքամարտիկներին, եւ նրանց մարզչին: Ծնորհավորեց հաջողության առթիվ, հետաքրքրվեց պատանի մարզիկների ուսման առաջադիմությամբ եւ մարզումային պայմաններով:

**ՎԱՐՄՍ ՕՐԲԵՅԱՆ**

# Արցախյան հերոսամարտի գործիչի ազատամարտիկները Սմբատ Տոռոզյանի լուսանկարներում



## Շաքեի ջրվեժը զբոսաշրջիկների համար կգործի բնականոն ռեժիմով

Գահպանվում ջրվեժի համար անհրաժեշտ էկոլոգիական թողքը /200 լ/վրկ/: Ստուգմամբ հանձնարարվել է ընկերությանը՝ դիմել ՀՀ բնապահպանության նախարարություն՝ վերանայելու իրեն տրված ջրօգտագործման թույլտվության պայմանները: «Շաքի ՓՅԷԿ»-ի համասեփականատեր Աղասի Հակոբջանյանը ներկայացրել է ընկերության կատարած աշխատանքը, ներդրումային ծրագրերը, որոնց երկրորդ փուլն ընթացքի մեջ է: «Պատրաստակամ են անվերապահորեն կատարել այն որոշումը, որն այսօր կկայացվի», - նշել է Աղասի Հակոբջանյանը:

Քը՝ ջրվեժի առաջացման, ամբողջական բնապատկեր ունենալու և ջրվեժի ամբողջ ներուժն օգտագործելու մասին է», - նշել է նախարարը: Առաջարկը հավանության է արժանացել նաև «Շաքի ՓՅԷԿ»-ի համասեփականատիրոջ կողմից: Արծվիկ Մինասյանը հանձնարարել է սեղմ ժամկետում պատրաստել և հաստատել ՓՅԷԿ-ի ցերեկային և գիշերային ժամերի աշխատանքների կառավարման նախագիծը:

Անդրադարձ է եղել տարածքում զբոսաշրջության զարգացման տարբերակներին, ներդրումների խրախուսման և բիզնես ծրագրին աջակցության նպատակով արտոնությունների տրամադրման հնարավորություններին, այդ թվում՝ ներմուծվող ապրանքների համար մաքսատուրքից ազատում և ԱՄՀ հետաձգում, այս մասին տեղեկացրել է տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմի ներդրումային քաղաքականության վարչության պետ Վահագն Լալայանը: Նախարար Արծվիկ Մինասյանը վստահեցրել է, որ օժանդակություն կլինի ծրագրի լիարժեք իրականացման և այն կյանքի կոչելու համար:

16.1.2017, mnp.am

**Նաղորդագրություն**

**Կապանի քաղաքապետարանը խոր վշտով հայրնում է, որ հունվարի 18-ին կյանքից հեռացավ Կապանի պատվավոր քաղաքացի Ռուդիկ Արուաշեսի Գրիգորյանը:**

Ծնվել է 1946թ. հոկտեմբերի 26-ին Կապան քաղաքում:  
1964թ. ավարտել է Կապանի թիվ 2 միջնակարգ դպրոցը:  
1970 թվականին ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը:  
1970-1972 թվականներին ծառայել է խորհրդային բանակում՝ որպես սպա:  
1972 թվականից ընդունվել է Կապանի միջըրջանային դատախազության օգնական և դատախազի տեղակալ:  
1987-1991 թվականներին եղել է Կապանի միջըրջանային դատախազը:  
1991թ. մինչև 1999թ. աշխատել է ՀՀ դատախազության՝ դատարանների կողմից կայացված դատավճիռների և որոշումների օրինակակառուցումը հսկող բաժնում՝ դատախազ:  
ՀՀ նախագահի 1999թ. հունվարի 11-ի հրամանով



նագրով նշանակվել է Սյունիքի մարզի դատախազ և նշված պաշտոնում աշխատել մինչև 2007թ. հունիսը:  
ՀՀ նախագահի 1999թ. մարտի 23-ի հրամանագրով նրան շնորհվել է արդարադատության երրորդ դասի պետական խորհրդակազմի դասային աստիճան:  
Պարգևատրվել է «ՀՀ դատախազության պատվավոր աշխատող» կրծքանշանով:  
2004թ. ՀՀ ոստիկանապետի հրամանով պարգևատրվել է «Համագործակցության ամրապնդման համար» մեդալով:  
Կապանի ավագանու 2015թ. հոկտեմբերի 8-ի որոշմամբ Ռուդիկ Գրիգորյանին շնորհվել է Կապան քաղաքի պատվավոր քաղաքացու կոչում:  
2014 թվականից ղեկավարում էր Կապանի քաղաքապետին կից հանրային խորհուրդը:  
Կապանի քաղաքապետարանը ցավակցում և սգակցում է հանգուցյալի հարազատներին և մտերիներին: ■

**Այունյաց երկիր**

ՀԻՄՆԱԳԻՐ ԵՎ ՀՐԱՄԱՐՄԱԿՉ  
**«ՍՅՈՒՆՅԱՍ ԱՇԽԱՐՀ»**  
ՍՄՀՄՍԽՍԿ ՊՍՏԱՍԽԱՆՏՎՈՒԹՅԱՐ ԸՎԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝  
**ՍՍՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:  
Հեռ.՝ (0285) 5 25 63,  
(091) 45 90 47,  
(077) 45 90 47:  
Էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru  
Էլ. կայք՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության և հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶԳ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնուն տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հրումը «Այունյաց երկրին» պարտադիր է:

Ձեռնարկի տակ տպագրվում են գովազդային նյութեր: Գրանցման վկայականը՝ 01Մ 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երևան, Արշակունյաց 2: Պետական աջակցություն՝ տարեկան 500000 ՀՀ դրամ:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 1735, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 27.01.2017թ.: